# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

# Հ Ր Ա Մ Ա Ն

18 հունիսի 2026թ. թիվ 654

## Ա.ՄԱԼՈՅԱՆԻՆ ՓԱՌԱՏՈՆԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով և 13-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ և 12-րդ կետերով, հաշվի առնելով Ֆրանս-Հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն հիմնադրամի ղեկավարի 2026 թվականի ապրիլի 6-ի գրությունը՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ  եմ.

1. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի գլխավոր մասնագետ Անի Մալոյանին 2026 թվականի հունիսի 19-ից 20-ը ներառյալ թույլատրել մասնակցելու «Հայաստանի արահետներ» ծրագրի կողմից իրականացվող քայլարշավային ամենամյա փառատոնին:
2. Միջոցառմանը մասնակցության հետ կապված բոլոր ծախսերը կատարվելու են հրավիրող կողմի հաշվին:
3. Ա.Մալոյանի աշխատանքից բացակայության ընթացքում փոխարինող նշանակել ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի գլխավոր մասնագետ Արփինե Ներսիսյանին:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ

18/06/2026

X

ԱԻԴԱ ՇԻՐԻՆՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Signed by: SHIRINYAN AIDA 5301740180 Ա.ՇԻՐԻՆՅԱՆ

2026թ. հունիսի 18
ք.Վանաձոր